

ՔՐԳՆՔԱԿԱՆ ՄԱՍՆ.

Տաթևի բարձրաւանդակի հարաւային սահմանում բարձրանում է Տաթևի վանքը. սրա առաջ, դէպի Որոտնայ գետը իջնում է մի ձորակ, բանաստեղծական բոլոր հրապույրներով օժտուած. Տաթևի գետակը մրմունջներ բարձրացնելով և հրաշալի, փոքրիկ ջրվեժներ կազմելով գնում է թափւում Որոտնայ գետի մէջ: Հեռուն բաց ճակատով ցցել է իւր գլուխը Մահանդուխտի գագաթը, հայ օրիորդի ողջախոհութեան այդ հսկայ կոթողը: Այստեղ մի տափարակի վրայ, տանձի ծառերի տակ հանգչում է Տանձատափ փոքրիկ գիւղը. բնական կանաչադարձ, գոյնզգոյն գորգը տարածուած է անհոգութեամբ ամբողջ ձորակում, նոյն իսկ ժայռերի վրայ. քարերի ճեղքերից դուրս է ցայտել բոյսը՝ կեանք վայելելու: Ծառերի վրայ ճռուողում են բազմաթիւ թռչուններ՝ դարձեալ կեանք երգելով. բայց այս կեանքով չի ձորակի գլխին կանգնած է Կեանքից զրկուած Տաթևը իւր փոքրիկ, կիսամեռ միաբանութեամբ:

Վանքը շրջապատուած է հաստ պարսպով, որ ունի չորս աշտարակ և մի մեծ դարպաս: Պարսպած տարածութեան կենդրոնում, կողքէ կողք կանգնած են Պօղոս-Պետրոսի և Լուսաւորչի տաճարները, իսկ սրանց հանգէպ, դարպասի մօտ, պարսպին կից բարձրանում է Ս. Աստուածածնի երկյարկանի մատուռը: Եկեղեցու հարաւային կողմում կանգնած է զգաւազան սիւնը, հայկական ճարտարապետութեան հրաշալիքներից մինը: Պարիսպների երկարութեամբ ձգւում են միաբանների խցերը, վանահօր երկյարկանի բնակարանը, ընդհանուր սեղանատունը, խոհանոցը և ախոռը: Սրանց մի մասը արդէն կիսով չափ քանդուած է:

Ս. Պօղոս-Պետրոսի եկեղեցու երկարութիւնն է 27,9 մ. (13,1 սաժ.), լայնութիւնը 16,68 մ. (8,3 սաժ.) և բարձրու-

թիւնը մօտաւորապէս 53,25 մ. (25 ս.) (ստուերով չափած): Եինուած է տաշած քարով. ունի երկու սին, միւս երկուսը կեղծ են, և զուրս են բերուած արեւմտեան զռան երկու կողմում շինուած խորանների պատերի մէջ: Առաջի երկու սինը բոլորովին ինքնատիւ են. սրանք քառանկիւնի են, միայն զէպի ժողովուրդը և զէպի տաեանը դարձած երեսների վրայ $1/4$ արշ. հաստութեան և բուն սինից նոյնպէս $1/4$ արշին նեղ՝ քառանկիւնի շերտ է ձգւում, որի սեան հետ կազմած անկիւններում քառորդ բոլորակ սիններ են բարձրանում մինչև կարնիզատը խաբիսիները:

Այս և կեղծ սինների վրայ բոլորում են գեղեցիկ ռոմանական կամարներ, կրելով մի լրաւական բարձր և գեղեցիկ կաթուղիկէ, որի տասներկու նեղ և երկար պատուհաններից լոյս է ստանում տաճարը:

Ընդհանրապէս տաճարը շատ լուսաւոր է, որովհետև հիսսիսային պատի մէջ էլ չորս պատուհաններ կան, խաչաձև դասաւորուած, մի մի հատ էլ հարաւային և արեւմտեան պատերի մէջ:

Սեղանը կիսաբոլորակ է և կամարակալ: Տաճարի չորս անկիւններում կան մի-մի խորան, փոքրիկ պատուհանով: Սրանց վերի մասերում կան գաղտնի պահարաններ:

Հարաւային պատի մէջ բացուած է մի դուռն, որի առջև թաղուած է Ս. Գրիգոր Տաթևացին: Այժմ այդ գերեզմանի վրայ մի փոքրիկ մատուռ է շինուած 4,66 մ. (2 ս. և 9 վ.) երկարութեան, 1,82 մ. (2 արշ. 9 վ.) լայնութեան և 3,55 մ. (5 արշ.) բարձրութեան: Մատուռի վրայ բարձրանում են երեք փոքրիկ կաթուղիկէ: Իսկ պատերի արտաքին երեսներին քանդակուած են գեղեցիկ խաչեր:

Տապանաքարը մի մեծ հասարակ քար է, որի վրայ մարմարին է ամրացրած և սրա վրայ քանդակուած մի խաչ, ներքևում մի ձեռք՝ եզիսկոպոսական գաւազան բռնած: Սրա շուրջը կալ հետևեալ տապանագիրը (բերում ենք. տառացի կերպով).
 Ժամայն ապագայն արքայն արքայն արքայն արքայն

Կառուցեալ Եփրատի Գրիգորի Տաթևացւոյն. Յո-

վա'ի'ի'՝ նսկիս'լոսլոս եւ Աքրահամ վարդապետս։
Խաչի շուրջը կան հետեւեալ տառերը.

Գ. Ս. Ք. Ի. *)

Դամբարանի վրայ էլ արտաքին կողմից կայ հետեւեալ
արձանագրութիւնը.

Շնորհիւն Այ շինեցաւ սը մատուոս եօթնա-
լոյս քաղունապետին եւ երկրորդ ոսկեքերանին
նրիցս երանեալ վրժպետին մերոյ եւ չորրորդ
Լոսատըշին սըն Գրիգորի Տաթեւացոյն ծնոսմը
քաղմաշխատ եւ օգտաշան Սիմեաց պետի տն Յո-
վակիմայ Սիմեցոյ արդեամբ եւ ծախիք քոնակո-
թեցոց, այսինքն Տը Գէորգ Տը Յակոբ եւ Տը Յա-
րութիւն քահանայիցն. նաեւ Կարապետին եւ Մը-
կըրտշին, Յակոբշանին, Սիմիօնին, Աղդէին, Յո-
վակիմին, Պետրոսին, Գրիգորին եւ Մարտիրոսին,
Քարամուսլոյն, Ստեփանին եւ Յօնանին, Յարու-
թիմին, Մօսեսին, Մկրտչին, Շահնազարին եւ
Ածատուրին, այլեւ քարեպաշտունի կանանցն Նազ-
լուին, Հուրիգատին, Մարիամին, Գուլփարիին,
որոց յիշտին օրհնութիւն եղիցի եւ աղօթք սըջս
Գրիգորի ի վերա նոցա լիցի, ամէն։ Կառուցաւ
սը մատուոս ի հայրապետութեան սըջ զահին Հը-
միածնի Տն Ղուկասու ի ՌՄԼԶ թուոջս մերում,
յաւուրս Փանահեան Դըրահիմ խանին։

Աջ խաչի տակ.

Սը Խաչս յիշատակ է Լծենեցի Մօսեսեան
Յարութիւնին։

Գերեզմանի մօտ կախուած է մի իւղանկար պատկեր,
որ ներկայացնում է Գրիգոր Տաթեւացուն։ Սա նկարուած է
1814 թ. և գեղարուեստական մի առանձին նշանակութիւն
չունի։

*) Երեւի չորս աւետարանի սկզբնագրերը—Գիբք ծննդեան,
Սկիզբն աւետարանի. Քանգի բազումք. Ի սկզբանէ էր բռնն։



ს ი მ მ

მ მ მ მ

Մի փոքրիկ ջահ և մի քանի մոմակալներ կազմում են մատուռի զարդարանքը:

Պօղոս-Պետրոսի տաճարը ներքին զարդարանքից զուրկ է. ունի միայն մի շատ հասարակ ջահ և մի քանի շատ վատ պատկերներ: Միայն սեղանը զարդարուած է ամենանուրբ մետաքսից պատրաստուած մի հրաշալի վարագոյրով, որի մասին ասում են, թէ նուիրել է Շահ-Աբասի քոյրը: Սա արդէն սկսել է փչանալ և տեղ-տեղ կտրկատուած է:

Շատ նշանաւոր են ինչպէս այս եկեղեցու, այնպէս և Ս. Լուսաւորչի գոները: Սրանք մի-մի հատ չափազանց հաստ և բաւական լայն ընկուզենու տախտակներից են շինուած և զարդարուած կանոնաւոր, նուրբ և հիանալի քանդակներով:

Տաճարի նախկին զանգակատունը այժմ քանդել են և սրա փոխարէն այժմ շինում են նորը, տաճարի արևմտեան պատին կից, չորս գեղեցիկ սիւների վրայ հաստատուած:

Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵԿԵՂԵՑԻ.

Ս. Պօղոս-Պետրոսի եկեղեցուն կից, դէպի հարաւ գտնւում է Ս. Լուսաւորչի փոքրիկ եկեղեցին, որի երկարութիւնն է 10,65 մետր (5 սաժ.), լայնութիւնը 6,4 մետր (3 սաժ.)

Եկեղեցին անսիւն է. միայն երեքական կեղծ սիւներ ձգւում են հիւսիսային և հարաւային պատերի վրայ, կրելով ռոմանական կամարներ և կամարակապ ձեղուն:

Սեղանի վերև կան երկու խաչաձև լուսամուտներ, իսկ սրանց վերև մի կլոր պատուհան: Հարաւային պատի մէջ ևս կան երկու լայն և սրանց վերև՝ երկու նեղ պատուհաններ. ինչպէս նաև մինը արևմտեան պատի մէջ: Եկեղեցին խորաններ չունի:

Ս. Լուսաւորչի եկեղեցու առջև շինուած է մի կամարակապ գաւիթ, ուր գտնւում է Ս. Գրիգոր Տաթևացու մատուռ դամբարանը: Այս շէնքը արդէն բաւական քայքայուել է, ուստի և Ս. Էջմիածնի Սինոդը հրամայել է քանդել: Այս գաւթում կան բաւականաչափ գերեզմաններ:

ԳԱԻԱԶԱՆ ՍԻՒՆԸ.

Եկեղեցու հարաւային կողմում կանգնած է Ս. Երրորդութեան անուան նուիրուած մի խաչակիր սիւն, ճարտարապետական մի գեղեցիկ հրաշակերտ: Եինուած է մանր սրբաւոր քարից: Ութանիստ է, իւրաքանչիւր կողմի լայնութիւնը՝ 36 սանտ. ($1\frac{1}{2}$ արշին), ուրեմն շրջապատը՝ 2,88 մ. (4 արշին): Բարձրութիւնը 15 մետր (7 սոսէն) է: Գրկնակի ներքնախարիսխների վրայ բարձրանում է բունը, որի մէջ տեղում բոլորում է մի կրկնակի մանեակ: Պսակաւոր վերնախարսխի վրայ բարձրանում է վարդիկներով (rosace) զարդարուած մի սնուր (tore), իսկ սրա վրայ՝ մի գունդ, կրելով մի կամարաձև քար, մէջը քերուրաքանդակ (աւելորդ մասերը քերելով դուրս հանուած) խաչ:

Վերջին տարիներս մի փոքրիկ ցանկապատ է շինուած սեան շուրջը:

Այս գաւազան սիւնը նշանաւոր է նրանով, որ երբ բարձրից շարժում են՝ օրօրւում է:

Այս հանգամանքը առիթ է տուել բազմաթիւ աւանդութիւնների կազմուելու: Ասում են, թէ սնդկի վրայ է կանգնեցրած, և այդ է պատճառը, որ շարժւում է:

Ս. Աստուածածնի փոքրիկ և գեղեցիկ եկեղեցին գտնւում է վանքի հիւսիսային կողմը, պարսպի դարպասին կից: Սա երկյարկանի է. առաջին յարկը կամարակապ է, իսկ երկրորդը՝ զմբէթաւոր: Երկրորդի դուռը բացւում է դարպասի ճակատի ծալքին, ուր բարձրանում են քարէ սանդուխով: Այս եկեղեցու երկարութիւնն է 7,14 մ. (10 արշ. 4 վ.), լայնութիւնը՝ 5,1 մ. (7 արշ. 3 վ.): Եինուած է սրբաւոր քարից և կողմնակի խորաններ չունի: Վրայի արձանագրութիւնը վիայում է, որ շինել է Գրիգոր եպիսկոպոսը:

Պարսպին կից կան բազմաթիւ թաղակապ սենեակներ, որոնցից նշանաւոր են հարաւային կողմում գտնուածները, ուր այժմ բնակում է վանահայրը: Այստեղ գլխաւոր դահլիճի մի դուռն է բացւում դէպի մի քայքայուած պատը:

գամը, որ կախուած է վերը յիշած բանաստեղծական ձորակի վրայ, և շատ գեղեցիկ տեսարան է ներկայացնում:

Միւս սենեակներից նշանաւոր է սեղանատունը, ուր շինուած են քարէ երկար սեղաններ և նստարաններ: Սա բոլորովին նման է Հարանց անապատի սեղանատան, միայն նրանից աւելի փոքր և աւելի հասարակ է շինուած:

Տաթևի վանքում կան բաւական նշանաւոր սրբութիւններ և հնութիւններ, որոնք պահուած են եկեղեցու մէջ գրուած երկու մեծ պահարաններում:

Սրանցից նշանաւորներն են.

1) Աւագ ս. Նշան արծաթապատ է և երեսին կերտուած է Յիսուսը խաչից իջեցնելիս: Պարունակում է իւր մէջ մի կրկնախաչ, որ ներփակում է խաչափայտի մի մասը: Ս. Նշանի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը.

Եիշատակ է դազանչեցի Դաւիթի որդի Յոնանու. թվ. Ռ. Մ. ՂԴ.

2) Մասունք ս. Յակովբայ եղբոր Տեառն: Արծաթապատ և ոսկեզօծ մի պահարան է, որ պարունակում է ս. Յակոբի մասը: Պահարանի վրայ կերտուած է Գ. Յակոբը, հայրապետական զգեստով. նրա առաջ՝ Երուսաղէմի տաճարը: Մօտը գրուած է. Եղբայր Տեառն: Միւս երեսին կերտուած է մի խաչ և անկիւններում մի-մի հրեշտակ:


Պահարանի կողքերին գրուած են.

«Նդեալ ի վանս սուրբ Թաղէի, մասունք սրբոյն
Յակօբոսի, եղբոր ըստ մարմնոյ տեսան Յի:

Կան նաև ս. Յովհաննու, ս. Ստեփանոսի և էլի ուրիշ երկու Աջեր:

Մի առանձին պահարանում էլ պահուած են բաւական հին և թանկագին եկեղեցական զգեստներ և սպասներ, որոնցից նշանաւոր են.

Երեք հատ քահանայական սաղաւարտներ, ՌՀԵ (1626), ՌՄԼԿ (1785) և ՌՄԹ (1760) թուերին նուիրուած: Երեքն էլ արծաթապատ և ոսկեզօծ են, սակայն երրորդը ամենա-



ՄԻՆՆ — ԳԱՆԱԳԱՆ ՏԱԹՆԻ ՎԱՆՈՒ



գեղեցիկն է և զարդարուած է ս. Աստուածածնի և տասներկու առաքեալներէ պատկերներով:

Հետաքրքրական են նոյնպէս մի եպիսկոպոսական Թագ ՌՀԵ. (1626) Թուից, մի վարագոյր ՌՃ. (1651) Թուից, զգեստներ և ալլն:

ՏԱԹԵՒԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ¹⁾:

Գաւթի սեան վրայ.

✠ ԹՎԻՆ ՆՂԲ. ի թագաւորութեանն Սմբատայ որդւոյ Աշոտոյ ես Տէր Յովնանէս շիննցի զարհս աւանականութեամբ Սմբատայ, որք աղաւթէք յիշեցէք ի Զրիստոս

Ա. Զանգակի վրայ.

Լսելի արա ինձ Տէր զձայն ցնծութեան եւ ուրախութեան ԶԾԱ. թվ.

Անեղին ծննդեամբ զՏէր Ստփ. Սիմեաց գահին կոչեա ի փառսդ հայրենեաց:

Բ. Զանգակի վրայ.

Այս Տէր Ստեփ. Օրբէլեան մեծաւ Զանիւ ուղղափառ պահէ զաւանդս յեկեղեցիս Հայոց ԶԾԳ.

Տէր Ստփ. միտրապօլիտ Սիմեաց որ է պրօտօֆրանտէս ամենայն Հայոց:

Լուսաւորիչ եկեղեցու դրան.

ԶՏէր Ստեփաննոս Միտրապօլիտ Սիմեաց որ է պրօտօֆրանտէս Հայոց մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսայի՞ն, շինողի սուրբ եկեղեցոյս յիշեցէք ի Բս.:

Լուսաւորիչ եկեղեցու հարաւային կողմում.

Մեք Սիսաք եւ Սարքիս կամանն Աստուծոյ, որդիք Շահանդիստոյ... թվ. ԶԳԵ.

Լուսաւորիչ եկեղեցու հարաւային պատի վրայ.

Այս է զեր արձան... որ Մաղրէն մինչեւ կոթ ինչ զեղ... կապլ... վախթն տուին սք առաքելոյս Լու... իւ-

¹⁾ Դասաւորուած են ժամանակագրական կարգով:

րեանց հոգոյն որդոց եւ թոռանց անձն գլխատակ մելիք թանգրդուլ փառկուն... որ Մզեն թեաքայիս Աղճաղալէն, Ճանդուլին, Աւետ... վրդեն... եց Ստեփանոս Կոթայ Դուլիկն Գետկայ իւրեանց ծնոաց գիրով գիր տուին Շմաւոն եպիսկոպոսին, թէ ով որ ընտանեաց կամ ատարաց խապանել կամենայ մեր մեղաց տէր լինի, եւ մասն Ուղայի առցէ ծնոս փթի եւ հող դառնայ. գիր յիշատակ առ ծնգ մայ Ենրսէս սուտանուն արեղայ թվ. 22Ա.

Գաւթի մի սեմաքարի վրայ.

Կամաւն Աստուծոյ եւ Գրիգոր փոխեցի զիմ հողն, զինչ որ հաւատուն կայր զնեցի եւ փոխեցի... եւ ետու յիշատակ սուրբ եկեղեցոյս, որ խափանել ջանայ մեր մեղաց տէրն է. թվ. 22Դ.

Ընկուզենի դռան վրայ.

Եւ Տէր Հայրապետ ծառայ Բարձրելոյն կանգնեցի գրասերս եւ նորոգեցի գրուսնս. զիս յաղաւթս յիշեցէք աղաչեմ:

Գաւթի սեման վրայ.

Եանուն Աստուծոյ, այս մեր զիւր Տէր Բարսղի, որ առի զտանուտս ի հայրենեացս ի տարւոյն դ. աւր ժամ Զրիստափորայ եւ Մխիթարայ, կատարիչք հրամանացս օրհնին յԱստուծոյ:

Եանուն Այ եւ Յովհաննէս քահանայ իմ հալալ ընչից զնեցի կոծմակոթն տուի ի սուրբ Առաքելոցն առաջնորդութեամբ սուրբ Ուխտիս Տէր-Հայրապետ Տէր-Յոհաննէս ետուն ի տարին վեց պատարագ սուրբ Յակոբայ տօնին:

Գաւթի միջին կամարի վրայ.

Թվ. ՌԺԴ. վերստին ետ նորոգել Տէր-Նղիշէն զգաւթաւ եւ սալն. յիշատակ իւրոյ յիշեցէք:

Տապանագրեր.

Այս յարկ տապանի եւ ղիւր դամբարան մեծահաւատ լնոջ Արուս խաթունի դստեր Սադունի եւ ամուսնոյ Տարսայի՞մ իշխանին. թվին 21Ե.

Տէր Թովհաննէս արքեպիսկոպոս շինող եկեղեցւոյ:
Թվ. 210:

Գաւթի Բ. սեան մի խաչի շուրջ.

Կաթան Այ ես Առաքել Սիմեաց եպիսկոպոս կան-
գնեցի զխաչս ի փրկութիւն... հոգւոյ. Ած... որ ի Բս.
զրարունապետ Գրիգորի յիշեցէք ի Բս. ՊԺԹ.

Ի յայս տապան քնառանի, կսյ հանգուցեալ նշխար
մեծի Ներսէսի րարունեաց պետի, եւ եպիսկոպոսի Սիմեաց
նահանգի, գոյով տնդեաւ Տաթեւացի, եւ եկեղեցւոյ շինողի.
եղեւ փոխեալ ի կենաց աստի ՌԺ. երրորդ թուի յիշեցէք:
Այս հանգիստս Զաքարիայի երջանիկ արհի եպիսկո-
պոսի թուականիս հայկականի ՌԺԲ.

Այս է հանգիստ Տէր Մկրտչի, որ ի լեհաց եկեալ լինի,
աստ սուրբ կրօնաւոր՝ առ Տէր փոխի, հազար հարիւր
իննեակ թվի:

Այս տապան՝ հանգստարան սրբազան արհի եպիսկո-
պոսին Մեսրոպայ Սիմեաց նահանգի ՌԺԺԲ.

Գաւթի Բ. սեան վրայ.

Այս արծան փրկութեան եւ նկարեալ արեամբ Փրկչին
'ի ըարեխաւուրթիւն Սողոմոն քահանայ:

Պարսպից դուրս, վանքից փոքր ինչ հեռու գտնուում են
վանքի կալը, մարագը և ախոռը, բաւական գեղեցիկ շի-
նուած: Այստեղ կալ հետեւեալ արձանագրութիւնը.

Եինեցաւ մարաքս եւ թաւլաս եւ աղբիւրս
'ի ՌՂԳ. (1644): Ասարտեցաւ ձեռամբն Տաթե-
ւացի Ղալամնանց Տէր Գրիգորի թող Տէր Բաղ-
դասարի որդի Սիմեաց եպիսկոպոսի Օվանէս
վարդապետին. Նաղի՛ր-Շահին ժամանակն էր,
ցորնին ըսոն գնայր Ժ. Թասսալի քողինն (?)
Թվ. ՌԺՂԴ. (1745):

Տաթեւի տնտեսական դրութիւնը, համեմատելով իւր
նախկին դրութեան հետ՝ շատ աննախանձելի է: Մինչդեռ.

առաջները յիսուանից աւելի սեփական գիւղեր ունէր, 600,000 շահի *) եկամուտ էր ստանում՝ այժմ ունի միայն հետեւեալ գիւղերը.

- 1) Տաթև, որ վճարում է վանքին տարեկան 600 ռ.
- 2) Տանձատափ 120 »
- 3) Լժէն մօտ 150 »
- 4) Հալիձոր 250 »
- 5) Եփնահայր 800 »
- 6) Խոտ 600 »
- 7) Աղքեանտ 200 »
- 8) Ղարաքիլիսա 620 »
- 9) Բերա 80 »

Ուրեմն ընդամենը 9 գիւղ, որոնցից տարեկան սռացում է 3420 ռուբլի:

Բացի սրանցից ունի և ուրիշ վեց գիւղ, որոնց մասին մի քանի կառուածատէրեր վէճեր են լարուցել և կամենում են խլել: Սրանք են Խասխասիկ, Սիսիանի, Շահվերդիլար, Քեալբալալ-Ելվաղլար, Հիւջիւթ, Դաստակերտ:

Վանքը ունի նաև սեփական արօտատեղիներ, ուր պահում են վանքապատկան անասունները. ունի արտեր, այգիներ, որոնց մէջ նշանաւոր է Շնհէրի և մանաւանդ Շվանի-ձորի այգին իւր պատուական գինով, ջրաղացներ և այլն:

Վանքը իւր միաբանների համար ամբողջ Տաթևի վիճակից որպէս տուրք ստանում է.

1) Պանիր. Մայիս ամսին, բոլոր ոչխարների մի օրուայ կաթը հաւաքում և պանիր են պատրաստում: Գործակալները գնում են գիւղերը, կանգնում այն ճանապարհների վրայ, որտեղով կաթը արօտատեղից պիտի բերեն տուն, վերցնում են կաթը և ուղարկում գիւղի քահանայի տունը: Այստեղ պանիր են պատրաստում և ուղարկում Տաթև: Պատահում էլ է, որ գիւղացիները կաթի փոխարէն պատրաստ պանիր են տալիս:

2) Դուլ.—Աշնանը նոյն գործակալները գիւղերը ցրուե-

*) Տես Աւելան, Սիսական, եր. 242.

լով՝ բոլոր կով ունեցողներէն իւր են պահանջում, իւրաքանչիւր կովից մի քառորդ ֆունտ:

3) Ձուլ. — Ձատկին մօտիկ ձու են հաւաքում, իւրաքանչիւր անից առնուազը երկու հատ:

Պէտք է ասել, որ այս տուրքերը հետզհետէ աւելի գրծուարութեամբ և աւելի քիչ են վճարուում:

Այս եկամուտներից վանքը պաշտօնապէս վերցնելով 900 ր., որպէս վարդապետների ռոճիկ, 150 սոմառ ցորեն, 75 սոմառ գարի, 12 փութ իւղ, 20 փութ պանիր, երկու ծառայի և հացթուխի վարձ՝ մնացածը ուղարկում է Եփեսոսին:

Վանքում ալժմ կալ մի վանահայր, որ միւսնոյն ժամանակ վիճակի լաշորդն է, երկու ուրիշ վարդապետ, երկու գպիր և երկու ծառայ:

ՏԱԹԵԻ-ԳԻՒԴ.

Տաթևի վիճակի ամենանշանաւոր գիւղը Տաթևն է, որ գտնուում է վանքից հազիւ երկու վերստ հեռաւորութեան վրայ, մի բլրակի ստորոտում. գիւղի միջով անցնում է մի փոքրիկ աննշան առուակ: Փողոցները ծուռ ու մուռ են, աները անկանոն: Գիւղի արևելեան կողմում, մի փոքրիկ տափարակի վրայ գտնուում է ս. Մինաս անունով եկեղեցին, փոքրիկ գմբէթով. շինուած է սրբատաշ քարերով, ձեղունը կամարակապ է և հանգչում չորս սիւնների վրայ:

Եկեղեցու արևմտեան դուռը գեղեցիկ նախշերով եզրափակուած է և վերին մասը վեղարաձև դուրս է փորուած:

Միւս, հարաւային դռան վրայ գրուած է.

Ներսէս վարդապետ շինող սրբոյ եկեղեցւոյս յիշեցէք ի Զս Ած. Թվ. ՌՂԵ.

Հետաքրքիր են նաև արևելեան կողմի պատուհանը և սրա մօտի խաչաձև լուսամուտները, ինչպէս նաև մի պատուհան, որ երևի ուրիշ հին շինութիւնից բերուած և գրուած է հասարակ զանգակատան մէջ. այս պատուհանը միակուր մի քար է, վանդակի ցանցը փորուած հանուած է իւր

միջից. նրա վերևի մի անկիւնում քանդակուած է մի այծեամ, միւսում մի որսորդ:

Եկեղեցին ներքուստ շատ պարզ է, գուրկ զարդարանքից: Հիւսիսային պատի մէջ մի փոքրիկ խորշ կայ, որտեղից մի աղբիւր կարկաշելով վազում է փոքրիկ աւազանի մէջ և ապա անցնում գնում Տաթևի վանքի դաւիթը: Շատ արտոյտի տպաւորութիւն է թողնում այս աղբիւրի կարկաշիւնը, միախառնուելով դպիրների և աղօթողների փառաբանութեան ձայնին:

Եկեղեցին պարսպապատ է, և դաւթում գտնւում են բաւական թուով գերեզմաններ, որոնց մէջ նշանաւոր են Օրբելեաններիը:

Գիւղը 844 թուականից սկսած պատկանում է Տաթևի վանքին: Բնակիչները բոլորն էլ Հայ լուսաւորչական են, 219 տուն, 956 ար. 925 իգական, ընդամենը 1881 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Դպրոց չունին, բայց ուսման սէրը բաւական տարածուած է, որովհետև առաջները երեխաները սովորում էին Տաթևի վանական դպրոցում, որ այժմ փակ է: Հիմա Կովկասի միջնակարգ դպրոցներում սովորում են այս գիւղից 5—6 երեխայ: Գիւղի բարոյական վիճակը բաւական ընկած է...

ՀԱՐԱՆՑ ԱՆԱՊԱՏ.

Սա գտնւում է Որոտն գետի աջ ափին, Հայի-ձոր գիւղի հանդէպ, մի փոքրիկ հարթութեան վրայ, որ երեք կողմից պատած է ժայռերով: Այս հարթութիւնից մի քիչ բարձր երևում է մի փոքրիկ տափարակ տեղ, որտեղ, Առաքել Դարիժեցու ասելով, շինուած է եղել այս վանքը (ժէ. դարում), որ յետոյ, մի մեծ երկրաշարժի ժամանակ, սահել իջել է այժմեան տեղը:

Զուրն ամբողջապէս շատ հրաշալի է, ծածկուած պողատու ծառերով: Այստեղ թռչունների ճուռողիւնը ներկայումս փոխարինում է նախկին անապատականների սաղմոսերգութիւնները:

Հարանց անապատը չորս սիւների վրայ ռոմանական կամարներով և նոյնպիսի ձեղունով մի վանք է 18,7 մ., ($8\frac{1}{2}$ ս.) երկարութեան, 8,88 մ. (4 ս. $\frac{1}{2}$ արշ.) լայնութեան և 10 մ. (5 ս.) բարձրութեան:

Եինուած է մասամբ տաշած, մասամբ էլ անտաշ քարերից: Ունի երկու խորան. ձախակողմեանի միջից մի դուռն է բացւում դէպի մի փոքրիկ մատուռ, ուր կալ մի գերեզման, սակայն առանց տապանազրի:

Եկեղեցին ունի ութ փոքրիկ պատուհան և երեք դուռ. արևմտեան դուռը տանում է դէպի մի կամարակալ գաւիթ, որ արգէն փուլ է եկած:

Այս դռան կամարակալ քարի վրայ կալ հետեւեալ արձանագրութիւնը.

Յիշեցէք ի Զս զմեղապարտ Սահակ արք-
նայս, որ նորոգեաց զեկեղեցիս եւ շինեաց զգա-
ւիթս, զպարիսպս եւ այլ շինուածք սուրբ անա-
պատիս յիշատակ իւր եւ իւր ծնողացն Տէր Ովա-
նէսին եւ Փարիխաթունին:

Սոյն դռան երկու կողմերում փոքրիկ քարերի վրայ փորագրուած են.

Յիշատակ է զայս խաչս ծառուր պապին:

Յիշատակ է խաչս Մարտիրոսին:

Գաւթում կան երեք գերեզմաններ, առանց տապանա-
գրերի:

Անապատը պատած է պարսպով, որի գեղեցկաշէն դար-
պասի վրայ գրուած է:

Յիշատակ է դուռս աղաղնեացն Այ Անթա-
նանին, Հռիփսիմին, Մարեանոսին, Սնտնի եւ
Ալէքսիանոսին. թվ. ՌՃԿԶ. էր:

Եւ առաւել Յակոբին, Աբրահամին:

Սրանից բարձր կալ մի ուրիշ արձանագրութիւն ևս, որ
անընթեռնելի է:

Պարսպի մէջ կան գետնափոր, փոքրիկ խցեր:

Հարանց անապատից փոքր ինչ ցած, դէպի գետի ափը,

ևորի լանջին գտնուում է մի փոքրիկ, անօին, թաղակապ մատուռ, բոլորովին կանգուն: Ո՛չ մի արձանագրութիւն չկայ վրան. իմ առաջնորդ Մինահէրցի քահանան և գիւղացիները ասում էին, թէ իրենք աւանդաբար լսել են, թէ այս մատրան անունը Պօղոս-Պետրոս է: Մատրան շուրջը կան գերեզմաններ, եղծուած տապանաքերով:

Ճանապարհը, որ տանում է Մինահայր գիւղից գէպի Հարանց անապատը՝ սաստիկ վատ է և վտանգաւոր: Շատ տեղեր անհրաժեշտ է ոտով գնալ:

ՄԵԾ ԿԱՄ ՏԱԹԵԻԻ ԱՆԱՊԱՏ.

Սատանի կամուրջից փոքր ինչ ներքև ևորակը աւելի լայնանում է և գետի աջ ափին կազմում մի փոքրիկ հարթութիւն, որը հարաւային կողմից կտրում է Տաթևի առուակը, տալով նրան լեզուակի ձև:

Նրա մի կողմից Տաթևի սարը գրեթէ ուղղահայեաց կտրուածքով մի բնական պարիսպ է կազմում, իսկ Որոտնայ գետը պաշտպանում է այդ լեզուակը արևելեան կողմից: Հիւսիսային կողմից միայն մի արուեստական պարիսպ բաւական է եղել անմատչելի դարձնելու այն տեղը, ուր հիմնուած է Մեծ Անապատը:

Հովիտն ամբողջապէս ծածկուած է ճոխ բուսականութեամբ: Դարաւոր թփերին նուիրում են անցորդներին իրենց զովարար սուուերն ու ահագին թուփը: Գետի գոչիւնը խլացնում է մարդկանց:

Ահա այս գեղեցիկ, իսկապէս բանաստեղծական տեղում բարձրանում է Մեծ կամ Տաթևի անապատը, որը հիմնարկել է Յակոբ կաթողիկոսը (Յէ. դարում), բերելով այստեղ Հարանց անապատի միաբաններին:

Այս անապատը, չնայելով իւր բնական ամրութեան՝ շրջապատուած է նաև մի հաստ պարսպով, որ ունի չորս աշտարակ:

Սրա կենդրոնում բարձրանում է ս. Աստուածածնի վանքը: Սա վեց գեղեցիկ սիւների վրայ բոլորող երեք ու-

մանական կամարներով և նոյնպիսի ձեղունով մի մեծ շէնք է։ Միջին կամարի վրայ բարձրանում է մի շատ փոքրիկ կաթուղիկէ։ Ութ փոքրիկ պատուհաններ աղօտ կերպով լուսաւորում են ահագին վանքը։

Արեւմտեան կողմում գտնւում է մի բարձր, երկու գեղեցիկ սիւներով ու ուսմանական կամարներով կիսաբաց գաւիթ։ Այս գաւթի մէջ թաղուած են երեք վանահայր։

Մի փոքրիկ, բայց շատ հասարակ գաւիթ էլ կայ վանքի հիւսիսային կողմում։

Պարսպին կից շինուած են վաթսուներից աւելի խցեր, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է մի կամարակալ բակից և մի փոքրիկ խցից, որի մէջտեղում կայ մի փոքրիկ ըռխարի (վառարան) և սրա առաջ փոքր ինչ հեռու, քարէ փոքրիկ թոնիր, ուր կրակ են ածելիս եղել քիւրսիի (թաղար) համար։

Վանքի հարաւային կողմում գտնւում է ահագին սեղանատունը, որ 21,1 մ. (10 ս.) երկարութիւն, 6,4 մ. (3 ս.) լայնութիւն և 7,46 մ. (3¹/₂ ս.) բարձրութիւն ունի, կամարակալ ձեղունով և փոքրիկ պատուհաններով։ Սեղանատան երկարութեամբ ձգւում են երկու կարգ քարէ երկար սեղաններ, մի-մի կարգ քարէ նստարաններով։

Սեղանատունը մի դռնով հաղորդակցւում է մի ուրիշ, նոյնպէս կամարակալ և բաւական մեծ շինութեան հետ, որ խոհանոցն է եղել։ Պատի մէջ բացուած է միջնադարեան մի օջախ, 2,84 մ. (4 արշ.) լայնութեան, 0,71 մ. (մի արշ.) խորութեան և 2,13 մ. (1 սաժ.) երկարութեան։ Մի անկիւնումն էլ շինուած է մի հնձան։

Վանքի բակում զարաւոր թթենիների տակ գուրս է ցայտում մի սառնորակ աղբիւր։ Վանքից փոքր ինչ հեռու, Տաթևի սարի մէջ, մի տեղ կայ, ուր լույիսեան տօթի ժամանակ կժով ջուրը մի քանի ըռպէում սաստիկ պաղում է։

Անապատը ալժմ կալուածներ չունի, բացի մի ալգուց։ Վանահայր համարւում է Խոսրով վարդապետը, որ Գորիսումն է բնակում, որպէս այն մասի գործակալ։ Վանքի

պահպանութիւնը լաւանուած է մի գիւղացի ընտանիքի, որ շատ քիչ խնամք է տանում նրա վրայ:

ՈՐՈՏՆԱՅ ՎԱՆՔԸ.

Որոտնայ վանքը գտնւում է մի գեղեցիկ ձորակի լանջին, որի միջով գոչգոչալով հոսում է Որոտնայ գետը: Վանքի արևելահիւսիսային կողմը բարձրանում է մի սուր լեռ, որի ժայռոտ գագաթին երբեմն եղել է Որոտնայ բերդը: Արևելեան և արևմտեան կողմերն էլ պատած են լեռներով: Ամբողջ ձորակը թաղուած է այգիների մէջ և շատ գեղեցիկ տեսք ունի:

Վանքը շրջապատուած է հաստ պարսպով, որի մի քանի մասերը բնական ժայռերն են կազմում: Ունի միայն մի դարպաս, մինչդեռ հնումը երկուսն է ունեցել: Մի սառնոցակ, վարար աղբիւր դուրս է ցայտում դարպասի մօտ:

Յովհան Որոտնեցու անուան նուիրուած վանքը շինուած է կարմիր, տաշած քարից. երկարութիւնն է 12,78 մ. (6 ս.), լայնութիւնը 10,65 մ. (5 ս.), իսկ բարձրութիւնը՝ մօտ 21,3 մ. (10 ս.): Եկեղեցին անսիւն է և խաչաձև, 3,55 մ. (5 արշ.) լայնութեան և 2,84 մ. (4 արշ.) խորութեան կիսաբոլոր թևեր բոլորում են երեք կողմում, իսկ արևմտեան կողմը քառանկիւնի է: Ձորս անկիւններում էլ կան մի-մի փոքրիկ խորան, իւրաքանչիւրը մի-մի նեղ պատուհանով:

Կեղծ-սիւները բաւական գեղեցիկ են, սրանց վրայ բոլորում են ռոմանական կամարներ, պահպանելով իրենց վրայ բարձրացող կաթուղիկէն, իւր չորս նեղ և կարճ պատուհաններով:

Խորանների վերևը կան գաղտնի պահարաններ:

Վանքի առաջ կայ մի գաւիթ, արաբական կամարներով և ձեղունով, որ այժմ բոլորովին քանդուած է: Յատակը ամբողջապէս ծածկուած է տապանաքարերով:

Վանքի հիւսիսային կողմում գտնւում է Ս. Աստուածածնի եկեղեցին, որ 11,96 մ. (5 ս. և 1 արշ.) երկարու-

թիւն և 4,62 մ. (2 ս. $1/2$ արշ.) լայնութիւն ունի, անսիւն և առանց զմբէթի, ռոմանական ձեղունով: Լուսաւորւում է միայն երեք պատուհաններով: Ունի երեք խորան: Եկեղեցու հարաւային և արեւմտեան կողմերում կան մի-մի գաւթ, ուր կան շատ գերեզմաններ:

Այս երկու եկեղեցիների արեւմտեան կողմում ևս կայ մի փոքրիկ, այժմ բոլորովին աւերուած եկեղեցի:

Վանքի հարաւային կողմում բարձրանում է մի սիւն գաւազան, որ թէև նման է Տաթևի վանքի սիւն-գաւազանին, բայց նրանից փոքր է և աւելի հասարակ է շինուած: Սա մի պատուանդանի վրայ կանգնեցրած քառանկիւնի 0,40 մ. (9 վերշոկ) լայնութեան և 2,13 մ. (մի ս.) բարձրութեան քար է, վրան մի խոյակ և մի քարէ խաչ ամրացրած: Ամբողջ գաւազան-սիւնը գետնից 5,68 մ. (8 արշ.) բարձրութիւն ունի:

Վանքը ներկայումս շատ խեղճ դրութիւն ունի: Ժամասացութիւն կատարւում է միայն Ս. Յովհաննու վանքում, որ ո՛չ մի զարդարանք չունի:

Պարսպի մէջ կան մի քանի աւերակ խցեր և գոմեր: Վանքը պահպանում է մի քահանայ, որ տարուայ մեծագոյն մասը բացակայում է, թողնելով վանքը մի պառաւ կնոջ և նրա պատանի որդու խնամքին: Պատերի և կաթուղիկէի մէջ բուսած են զանազան բոյսեր, որոնք անտարակոյս աւելի կարագացնեն շէնքի վերջնական քայքայումը:

ՈՐՈՏՆԱՅ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Տաճարի հիւսիսային կողմում.

Թվն. 2. Հ. Ծ. ամի կաման Այ. Ծս Տէր Ստէփան-նոսս Օրպէլեան որդի Զալալեան արք եպկսի տանն Սիսական եկի մեր հայրենի տունս. ի վանս Վաղասնու. եւ տեսի զհիւրանոցն զոր կտնալ էր հայր Սարգիսն. վս արեւշատութեան Բուրթելին եւ զաւակացն իւր Բէլքէնէին եւ ի վանեա յիշատակի իւր, կամ եղեւ ինձ միասնակցիլ այնո՞ւ արդեանց եւ

տուել զՎաղատնի զխաշահորէն զգիտ մեր եւ Կիւրդի վանա-
ազատ ի մեր յամէն զի յառաջ տոռած էր. Ժողովուրդ եւ
մեք զմեր քաժին հասն տվաք 'ի պէտս պանտոկին. արդ-
այսմհետէ շունի ոք հրաման աթոռալալաց կամ հայ իշխո-
ղաց զմեր տված 'ի սք ուխտէս հանել կամ խափանել շա-
նայ մեր մեղացը պարտական լիցի եւ յերից սք Ժողովոցն
որոշ ելցէ՝ մասն եւ քաժին ընդ խաշողացն եւ յուղային
առցէ ամէն:

Տաճարի արեւմտեան կողմին.

Կաման Այ մեք Բուրթելս եւ Գուղտայս են որդիք Էլէ-
կոմին որդոյ Տարսայիճին, եղբայր Սմպաթայ. իշխանք
տանս Սիսակայ. տեսնալ զձեռագիր նոցին զոր շինել կա-
մելով զվաղինջուց աւետեալ եւ խաղտեալ վանս Վաղատնու
'ի ձեռն հայր Մխիթարայ հատեալ էին սահման գետովն 'ի
շրջանաքարն եւ քայլիճն: Հայ ծաղիկն է տվել իւրեանց հայ-
րենեաց զիրիմիս գիւղ, Ուզ գիւղ, Շամպին հողերն իւրեանց
սահմանովն. եւ ի Շնէր զարուջանց հողն եւ զշուր եւ զայ-
գիքն ամէն սահմանան. եւ խնդրեալ արձանագրել յիշա-
տակ զոր անփոյթ արարեալ եմաս առ մեզ. եւ մեք կամե-
լով արձանագրեցաք վս յիշատակի նոցին ի շատութեան
մեզ եւ զաւակաց մեր. եւ իշխօղք տանս կարգեցին տարին
մի քառասունք անխափան կատարել. արդ ելծէ ոք 'ի մերոց
կամ յօտարաց զմեր սահմանեալ տուրքս, խափանել զգիրս
զմեր մեղացն պարտական լիցի. եւ թէ առաջի Այ ամօթ
երես ելցէ: Եւ թէ տաճիկ կմ այլազգ փոխի եւ հանել կա-
միցի իւր մահմետին ապիզար լինի. եւ ո որ նախաթ առ-
նու թվ. 247-:

Տաճարի արեւելեան կողմին.

Էլիկոմ յիշին Սմպաթայ եղբայր նորա Տարսայիճիս
որ կրկին նորոգեցի զեկեղեցիս յիշատակ ինձ:

Տաճարի դռան դիւին.

ԶՕհաննէս մեղուցեալ ամ սիրող աղաչեմ յիշեցէք
ծնողքս ի թվ. ՌԺ-:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԵՊԱՐԽԻԱՆՈՎ
ԵՐԵՎԱՆԻ
ԿՈՆՍՏԱՆԴՆՈՎ

ՈՐՈՇԵԱՆՑ ԶԱՆԳ

Երևան-Եր.

Տաճարի գաւթի դռան.

Եւ Ամիրս Որդայ որդի Ղազիկին Անկեղակոթեցի շինեցի զգլուխ սը Կարապետիս այս եւ խաշն կանգնեցի աթոռական Տէր Եմաւոն վարդապետ թվ. Գ. 2. է ին:

Մեծ եկեղեցու արեւելեան կողմին.

Վասակ որդի Սմայաթայ շինեցաւ հրամանաւ թագաւորին Սմայատայ. ի ձեռն Եսրանտուիտ թագուհոյ բարեպաշտի, որ տաճկերէն կասուի ամիր փարի:

ՈՐՈՏՆԱՅ ԲԵՐԴ

Հայոց նշանաւոր, հազարամեայ բերդերից մինը եղել է նաև Որոտնայ բերդը, որ դեռ Վարդանանց ժամանակ պարսիկներից խլուել և միայն մեծ զօւաւրութեամբ կրկին անցել է Վարդանանց ձեռքը: Պատմական շատ անցքերից և շատ դարերից յետոյ, երբ Սենեքերիմ թագաւորն սպանուել և Կապան մայրաքաղաքն էլ առնուել է՝ թուրքերը տիրել են նաև Որոտնայ բերդին (1104), որից 115 տարի յետոյ, այսինքն 1219 թուին Իւանէ աթաբէկը խլել է նրանց ձեռքից: Շատ տարիներ յետոյ, երբ թաթարները նորից տիրապետել են Հայաստանին՝ Լիպարիտի որդի Սմբատ Օրբէլեանը կողմնակալ Բալու Նոյի հաւանութեամբ նորից տիրել է Որոտնայ ամբողջ երկիրը *), և ինչպէս կարծւում է՝ լանջնել է այն իւր եղբոր Տարսալիճին, որ այս վիճակի տէր է կոչւում նախ քան իւր եղբորը յաջորդելն ու գնալ Վայոց ձորը բնակելը: Սրանց տոհմից մնացին պալաղատողներ ո՛չ միայն Որոտնայ, այլ և Տաթևի, մինչև մեր ժամանակները, առաջինները որպէս իշխող տէրեր, իսկ յետինները լոկ որպէս կալուածատէրեր:

ԺԸ. զարի սկզբում, Գուգարաց Յովհանն-Աւան խանը, Դաւիթ բէկի պատմելի ասելով՝ 56,000 (!) հայկական զօրքով եկել պաշարել է այս բերդը, սակայն չէ կարողացել առնել: Մի քիչ յետոյ, նոյն տարին (1723 թ.) Դաւիթ բէկն է պա-

*) Չամչեան Գ. եր. 246.

շարել և շնորհիւ այն հանգամանքին, որ յորդ անձրեւները փլցրել են պարսպի մի մասը՝ Դաւիթ-բէկ *) անցել է այդ տեղով, տիրել բերդին և սրի քաջել ալլազգիներին **):

Ահա այս բերդը գտնուում է համանուն վանքից արեւելահիւսիս, գետի անմիջապէս աջ ափին բարձրացող լեռան վրայ, որի երեք կողմը գահավէժ ժայռեր են և միայն մի կողմը դէպի առաջ թեքուելով՝ մի փոքրիկ հարթութիւն է կազմում: Այստեղ այժմ մնում են բերդի ավերակները: Լեռան բուն գագաթին, որ նոյնպէս երեք կողմից պատած է բնական ժայռերով և միայն մի կողմից է մատչելի՝ գտնուում է միջնաբերդը: Այս բաց կողմն էլ պատած է եղել հաստ պարսպով, որ այժմ քանդքանդուած է: Միջնաբերդում կայ մի ավերակ մատուռ, իսկ սրանից ձախ, ժայռի ամենաբարձր տեղում մի շինութիւն, որ միայն երկու պատ ունի: Գուցէ սա գիտանոց եղած լինի:

Մի ստորերկրեայ, ջուր բերելու նպատակով շինուած անցք իջնում է մինչև գետի ափը. անցքը այժմ տեղ տեղ քանդուած և լցուած է:

Միջնաբերդում կայ մի տապանաքար, որ թաւալուած է երևում իւր տեղից և կրում է հետևեալ արձանագրութիւնը.

Այս է հանգիստ քարեպաշտ իշխանին արքայազուն Սմբատայ՝ որ ի կէս արեւայ ի Զս փոխեցաւ յիշեցէք ի Զրիստոս. թվ. ՊՀԹ.

Բերդի ստորոտում կայ մի կամուրջ, որ շինել է 1853 թ. բռնակութեցի Մելիք-Թանգին:

Կամուրջից քիչ բարձր, Որոտն գետի ձախ ափին, գրտընում են հին Որոտն գիւղի ավերակները, և սրանց կից այժմեան Ուրուտ գիւղը, ծածկուած պողատու ծառերով: Բնակիչները շիւապարոսիկներ են, ընդամենը 180 տուն:

*) Չամչեան Գ. Կր. 787.

**) Հ. Ալիշան, Սիսական. Կր. 217—218.

ՇԱՀԱՆԴՈՒԽՏԻ ԺԱՅՈՒ.

Տաթևի հարաւային կողմում, մօտ 4 վերստ հեռու, երեք գագաթներ ուղղահայեաց լանջերով իջնում են Որոտն գետի ափը. սրանցից միջինը, որ ժայռոտ է՝ կոչւում է Շահանդուխտի ժայռ կամ Թուրքերէն՝ Գեալին-ղայա (հարսնաքար)։ Սրա գագաթին մօտ, մի փոքրիկ ձորակ է բացւում, ուր կարմիր քարից մի փոքրիկ մատուռ կայ շինուած։ Կարմիր կիրակէին շրջակայ գիւղերից նորահարսերը այստեղ ուխտ են գալիս, որպէս զի իրենց երեխաները ծաղիկ չհանեն։

Ժողովուրդը այսօր էլ հիացմամբ պատմում է, թէ ինչպէս Շահանդուխտ անունով մի աղջիկ հարս գնալիս են-թարկուել է անօրէնների լարձակման, որոնք կամեցել են նրան փախցնել, և թէ ինչպէս նա, չկամենալով անօրէնների ձեռքն ընկնել՝ ձիով Թուել է այդ ժայռի գագաթից ու անվնաս կանգնել Որոտնայ գետի ափին։ Այսպիսի հրաշքով ազատուելուց լետոյ՝ նա այլ ևս չէ կամեցել հարսնանալ. այդ լերան լանջին շինել է մեր լիշած մատուռը և այնտեղ ճգնել. իսկ իւր կալուածները նուիրել է աղքատներին և Տաթևի վանքին։

Ժողովրդի լիշողութեան մէջ այսպէս վառ պահուած դէպքը իսկապէս պատմական է, և ահա թէ ինչպէս է պատմում այդ դէպքը Ստեփանոս Օրբելեանը (գլ. ԼԶ.), օգտուելով հէնց հերոսուհու գրած նամակից, որ գտնուել է Տաթևի վանքում։

Անցքը պատահել է Ե. դարի կիսում։

«Ես մեղուցեալ աղախինս Քրիստոսի Շահանդուխտ՝ դուստր Վարադ Տրդատայ երթալի հարսն ի տունն Թորգոմեան. և եկեալ ի սահմանս Բաղաց՝ ի գլուխ քարիս, ընդ որ տնցանէ ճանապարհն՝ լանկարծակի պատահեցան ինձ Իսմայելացիք, որք վասն համբաւոյ գեղոյ իմոյ կամէին լափըլ-տափել զիս, և սուր ի վերայ եղեալ կոտորէին զհեծեալ-գունդն որ ընդ իս. ապա լաւ համարեցայ քան ի ձեռն ալ-լաղգեացն գալլապատառ կորնչիլ, վասն Քրիստոսին իմոյ

գահավէժ մեռանել, եւ յիշելով զսուրբ Աստուածաճին և զսուրբն Հռիփսիմէ՝ լանձնեցի զիս սուրբ Երրորդութեանն և կնքեցի զողորմելի անձն իմ սուրբ խաչին և դարձուցեալ զերասանակ երկվորին՝ թռեալ ընդ քարս: Եւ լահագին շնչմանէ հոգմոյ և աներևութ զօրութեամբ իջի իբր կառօք ի խորութիւն ձորոյս ես և երկվարն իմ անվնաս... Եւ իջեալ ի հեշտավայրն՝ նուիրեցի զանձն իմ Քրիստոսի և ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախճանն իմս...

